

«Հանդէս Ամսօրեայի» խմբագրութիւնը յայտնելով իր ի սրտէ ուրախակցութիւնը այս բարեղէպ ընտրութեան առթիւ, կը բերէ իր հիացմունքը Արժանապատիւ Ընտրելոյն եւ իր եղբայրական համակարիք սէրը Միաբանութեան բոլոր անդամներուն. կը մտալժէ բոյր Միաբանութեան նորընտիր Արքայօր իմաստուն ղեկավարութեան տակ ամս լիութեան, յառաջադէմ զարգացման եւ բարեգարդութեան:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»ի:

ԵՂԻՉԷ ԱՐՔԵՊ, ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՏՐՈՒՄ ԶՍՅՈՑ ԵՐՈՒՍԱԶԷՄԻ.

ՅՈՒՐԵԱՆ

Կէս դար տարածած իւր բազուկներն անմահ Գառին առաջ երկնաւոր Հօթ գութն ու ձիւրը հայցած է Յոբելեարը հայ ժողովուրդի համար. իբրեւ Մովսէս Սինայի վրայ, իբրեւ Ներսէս Նպատի վրայ: Յիսուն տարիներ զոհաբերած է նա հայ ժողովուրդի բազինի վրայ, անոր ցաւերուն ցաւակից եւ անոր ուրախութիւններուն ուրախակից: Այդքան ժամանակ նուիրուած է նա հայ ժողովուրդի դաստիարակութեան, հայ գրականութեան եւ հայագիտութեան բարգաւաճման:

Հայ անուան ի պատիւ, հայ մտքին ի շահ, հայ սրտին ի մխիթարութիւն վա՛ր տակեցաւ նա բանիւ եւ գրչով անձնուէր, անշահախնդիր, բազմաբողին:

Ամէն տեղ, ուր ինկած են թորգոմայ տան սերմերը, հասած է Սրբազան Յոբելեարին խնամքը. բայց յատկապէս Կ. Պոլիս, Պարտիզակ, Արմաշ, Զմիւռնիա, Երուսաղէմ եղած են աշխատասէր Մշակին գործունէութեան դաշտերը. խոսքն հողը գործունեայ, հմուտ ձեռքին տակ ծաղկալից, մրգաշատ բարգաւաճած է. առապար սրտեր անոր առատածիր խօսքերու տարափին տակ յուրթի գործուած, անմշակ մտքեր դաստիարակի կենսունակ, հայրատուր ցողով կակղացած, ամոքած ընդունած են իրենց մէջ առողջ սերմեր եւ հայ անդաստանին մէջ պտղալից գալ՛ գացած: Արդիւնքը վաստակն է բաշարի Մշակին ջերմ՝ քրտինքներուն. տոհմականը անոր փառքի շտեմարանը պիտի կրուի շեղջ շեղջ:

Սերմանեց սէր, կը հնձէ գութ. տարածեց լոյս, կը շողայ լուսափիւռ. հայ ժողովուրդի համակրանքը միշտ վառ եղած է հանդէպ իր գործիչին. եւ այդ համակրանքի հաւաստիքն է տօնախմբութիւնս, երբ համայն հայ սիրտն է որ կը ցնձալ՛ Արքիւրը ջինջ է եւ բազմաբողիս, ախորժեղի ամէն ծարսիներու:

«Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը կը զգայ ինքզինքը պարտաւոր, բերելով ձօնելու Յոբելեարին ծաղկեպսակ ի կողմանէ հայ բանասիրութեան, ի նշանակեքախտեաց եւ շնորհակալու մտաց: — Laurum lauro digno!



141067-64

Բարձրապատիւ Յոբելեարը կը տօնէ նաեւ իր գրական գործունէութեան յոբելեանը. գործունէութիւն, որ նուիրուած էր համակ հայ բանասիրութեան: Ոչ միայն հետամուտ եղած է Յոբելեարը նախնեաց լեզուն սիրելի ընծայել հայ մատաղ սերունդին, հասկանալի եւ ղիւրընկալ, դասաւանդութեամբ եւ դասազրբերով, անուան պատուաբեր աշխատութիւն է «Պատմութիւն հայ Մատենագրութեան» (1885), ուր հակիրճ, ղիւրընկալ տողերու մէջ ամփոփած է հայ մտքի արտադրութիւններու բովանդակածը ի սկզբանէ մինչեւ մեր օրերը: Հմտութիւն, կուռ լեզու, ճշգրիտ դատաստան, պայծառ պատկեր հայ մտքի զարգացման ելելէջներու՝ զարդն է այդ աշխատութեան. եւ ցաւ է որ այն իր անդրանիկ տպագրութեան մէջ մնաց անձուկ շրջանակին միայն մատչելի:

Յոբելեարին շնորհակալութիւն նաեւ իր բազմաթիւ մեծ ու փոքր յօդուածաշարքերուն համար, նուիրուած մատենագրական, գրական եւ լեզուաբանական հարցերու: Մանրակրկիտ բանասէրը կը խօսի հոն, սուր տեսութեամբ, ուղիղ դատաստանով, զգոյշ քայլերով: Ս. Գրքի թարգմանութեան եւ նախնեաց այլ ընագիրներու մասին իւր բառաքննական-ընազարքննական ղիտողութիւնները յարգեն ամէն ժամանակի համար. եւ բանասիրութիւնը պիտի գտնէ հոն շատ մը ինդիւններու արձույթ եւ լուսաւորութիւնը: Դժբախտաբար անոնք ցրուած են բազմաթիւ ամսագիր-օրագիրներու մէջ, եւ այս պատճառաւ դժուարամատչելի հայ բանասէրներու ընդարձակ շրջանակներու:

Դուրեան Սրբազանի մէջ խօսած է նաեւ Պետրոս Դուրեանի հոգին, աւելի հովուական սրինգով: Եթէ Մուսան յորդորած է զինքը երգել աստուածներու բարբառով, բայց բանաստեղծը աւելի յաճախ սիրած է խօսիլ հայ սրտերու լեզուով, ժողովրդեան ընտելացնել հայ երգիչներու՝ ինչպէս Ներսէս Շնորհալիի մի ստեղծագործութիւնները՝ աշխարհաբար տաղաշափութեամբ: Նոր սրտեր հին սրտերու զօրելու փորձեր, որոնք անչափ գնահատելի են:

Արժանի է մշակն վարձու իւրոյ: Եւ Յիսնամեայ վաստակաւորին մեր հիացմունքը, գնահատութիւնը եւ համակրանքը կ'արտայայտենք երախտագիտական զգածումներով:

Կը մտալժենք Յոբելեարին, ոյժ, կարողութիւն եւ ամաց շատութիւն, պայծառանալու իւր գործունէութեան ասպարէզի վրայ աւելի շողշողուն արդեամբք, ի պարծանս Ազգին եւ տոհմային գրականութեան:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»ի: